ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՈՒԹԵՐՈՐԴ ԱՃՈՒՐԴԻ) ՄԱՍԻՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ընդհանուր տեղեկություններ

Սնանկության գործի համարը	ՍՆԴ/3749/04/23
Պարտապաններ	Մանվել Հայկազի Մարգարյան և Գայանե Միշայի Մնացականյան
Սնանկության գործով կառավարիչ	Վահագն Վիգենի Դավթյան (արտոնագիր՝ № 005-18)
Կառավարչի կոնտակտային տվյալներ	ՀՀ, ք. Երևան, Ֆուչիկի փող., 27/5 շ., 300 գրասենյակ, հեռ.՝ +37499080914, էլ. փոստ՝ lex.davtyan@gmail.com

2. Աճուրդի անցկացման վայրը և ժամանակը

Աճուրդը կկայանա 2026 թվականի դեկտեմբերի 04-ին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5, 109 սենյակ հասցեում:

3. Լոտի նկարագիրը և մեկնարկային գինը

Լոտ N 1	Տրանսպորտային միջոցի թափք MERCEDES-BENZ A160
Նույնականացման համարը (VIN)	WDD1681332K049431
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երևան, Նորագավիթ 4 փողոց, 1-ին փակուղի, 12 տուն
Սահմանափակումները	Կիրառված են ՍՆԴ/3749/04/23 գործով սահմանափակումներ, որոնք ՀՀ սնանկության դատարանի կողմից վերացնելուց հետո կստորագրվի առուվաճառքի պայմանագիր, որի հիման վրա կարող է գրանցվել գնորդի իրավունքը
Լոտի մեկնարկային գինը	52,428.8 (հիսուներկու հազար չորս հարյուր քսանութ ամբողջ ութ) ՀՀ դրամ

4. Մասնակցության պայմանները, վճարումները և ժամկետները

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ՝ մինչև 2026 թվականի նոյեմբերի 29-ը ներառյալ, ՀՀ սնանկության դատարանի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Օտյան 53/2) կարող են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Աճուրդի մասնակցության հայտ,

- Ֆիզիկական անձանց դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձանց դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, իսկ լիազորված անձի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև սահմանված կարգով տրված լիազորագիր,
- Նախավճարի վճարման անդորրագիր՝ լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով՝ 2,621.44 (երկու հազար վեց հարյուր քսանմեկ ամբողջ քառասունչորս) ՀՀ դրամ,
- Մասնակցության վճարի անդորրագիր՝ լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի չափով՝ 524.29 (հինգ հարյուր քսանչորս ամբողջ քսանինը) ՀՀ դրամ:

Նախավճարը և մասնակցության վճարը պետք է փոխանցվեն պարտապանի սնանկության հատուկ հաշվեհամարին՝ 1150012711841880 («Ամիօբանկ» ՓԲԸ, ստացող՝ Մանվել Հայկազի Մարգարյանի սնանկության հատուկ հաշիվ): Աճուրդի մասնակից չհամարվող անձինք (դիտորդները) աճուրդին ներկա գտնվելու համար պարտավոր են նույն ժամկետում (մինչև 2026թ. նոյեմբերի 29-ը ներառյալ) ներկայացնել ծանուցում և վճարել մուտքի վճար՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամի չափով:

5. Աճուրդի անցկացման կարգը և հաղթողի որոշումը

Աճուրդն անցկացվում է դասական բաց եղանակով: Աճուրդի հաղթող է ճանաչվում աճուրդի ընթացքում լոտի համար ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

6. Վերջնահաշվարկի ժամկետները և պայմանները

Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է լոտի վաճառքի գինը (նվազեցնելով վճարված նախավճարի չափը) ամբողջությամբ փոխանցել պարտապանի վերը նշված սնանկության հատուկ հաշվեհամարին՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից տասն օրվա ընթացքում: Ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ հաղթողի վճարած նախավճարն ու մասնակցության վճարը չեն վերադարձվում:

7. Լոտի ուսումնասիրումը

Աճուրդի դրված լոտը հնարավոր է ուսումնասիրել և զննել սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2026 թվականի նոյեմբերի 28-ը ներառյալ, յուրաքանչյուր օր ժամը 11:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ գույքի գտնվելու վայրում (ՀՀ, ք. Երևան, Նորագավիթ 4 փողոց, 1-ին փակուղի, 12 տուն)՝ նախապես կապ հաստատելով սնանկության գործով կառավարչի հետ:

8. Հատուկ նշում

Աճուրդը կազմակերպվում և անցկացվում է «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 16-ի N 116-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան: